

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի շենքում 2019թ. ապրիլի 15-ին ժամը 12:00-ին կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքն աճուրդով:

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0.0525 հեկտար 3-րդ կարգի վարելահողի հողամասի (լոտ 1, կադաստրային ծածկագիր 04-065-0603-0003) աճուրդային վաճառքի մեկնարկային գին է սահմանվել 86 000 ՀՀ դրամ:

Մեկ աճուրդային քայլի գինն է 4 300 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 5 000 ՀՀ դրամ:

2. Համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի 0.0478 հեկտար հողամասի (լոտ 3, կադաստրային ծածկագիր 04-065-0012-0144) աճուրդային վաճառքի մեկնարկային գին է սահմանվել 10 000 ՀՀ դրամ:

Մեկ աճուրդային քայլի գինն է 500 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 5 000 ՀՀ դրամ:

3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, հողակադաստրային տարածագնահատման 9-րդ գոտու, Երևանյան խճուղու 13/14 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի 0.019 հեկտար հողամասի (լոտ 4, կադաստրային ծածկագիր 04-065-0062-0091) աճուրդային վաճառքի մեկնարկային գին է սահմանվել 364 000 ՀՀ դրամ:

Մեկ աճուրդային քայլի գինն է 18 200 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 5 000 ՀՀ դրամ:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան, սերվիտուտով ծանրաբեռնված չեն:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2019թվականի ապրիլի 11-ը, ժամը 18:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարան՝ հասցեն Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1. հեռ.(096)11-00-44:

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ